



21. ԴԱՎՅՈՒԻ ՀԵՖԻԼԹԸ

Ժամանակով մի թաքավոր ա ըլնում, իրա նազրին ասըմ ա.—
Վե՛ր, դարբշի լրւղ հաքնենք, էթանք մեր երկիրը ման գանք, տե-
նանք ի՞նչ կա երկրումը:— Թաքավորը իրա նազրի հետ դարբշի
լրւղ են հաքնում ու էթըմ: Շատ ու քիշը աստված գիտի, էս գեղից
էն գեղը, էս քաղաքից էն քաղաքը, մի օր մթնում ա՝ մի գեղըմ զո-
նալ են ըլըմ: Նախրշին հանդիցը գալուս, գե որ իրանք դարբիշ են,
ասըմ են. ռնախրշուց տեղ ուղենք, ըլինք նախրշուն դոնաղ»:

Ասըմ են.— Բարի իրիկուն, նա՛խրշի:

Ասըմ ա.— Բարո՛վ, հազար բարով դարբիշ բարեք:

— Նախրշի, — ասըմ ա,— էս քշեր մեզ մի տեղ տու, վե զանք:

Ասըմ ա.— Համեցե՛ք, ինչն ա բոլ՝ հացն ու զուրը:

Վեր ա ունըմ էտ մարթկերանց տանըմ ա իրանց տուն: Նա-
խրշին իրա մեզարը վերցնըմ ա; էթըմ գեղից հաց կիտըմ, բերըմ
տուն, ասըմ ա.— Ա՛յ կնիկ, վեր հաց բեր ուտենք:

Կնիկը հացը բերըմ ա, ուտըմ են, խմըմ են, քնելու վախտն էլ՝
պառկըմ քնըմ: Քշերվա մի վախտը էս դարբիշը տենըմ ա, որ էս
կնիկը էրեխով ա՝ տնքում ա, ասըմ ա.— Նախրշի ախպեր, ուրիշ
բան շմտածես, դու մեր ախպերն ես, կնիկդ էլ մեր քիրն ա, մենք
էրկսով տղեն կառնենք, կազատենք, էլ էս կես-քշերին ում դուն
էթաս, ում ասես, որ տատմեր գա. աստված տվել ա, որ մենք
ամեն բան գիտանք:

Ծրագը վառըմ են, կուռը բռնըմ են, դես ման ածըմ, դեն ման ածըմ, ազատվըմ ա, բերըմ ա մի տղա: Ընչար հանգը-հունգը՝ քշեցը լիսանըմ ա:

Առավոտաը դարբիշն ասըմ ա.— Նախրչի ախպե՛ր, դու կէթաս քու նախրի աղաքը, մենք էլ կէթանք մեր բանին՝ ընչար ութ օր, ութ օրից ետնա մենք կդանք, էն վախտը էրեխեն էլ կհալալենք՝ կմկրտենք, ամեն ծախսն էլ մեր վրա կըլի:

— Ես,— ասըմ ա,— թաքավոր եմ, էս էլ իմ նազիրն ա, ուրիշ քան չմտածես. իմ խորուրթը քու մոտ մնա, առ էս էրկու մանեթ փողը տան վրին ծախս արա, մենք էթըմ ենք:

Դարբշշները վեր են կենըմ ու էթըմ են: Պատըտըմ են, ութ օրից ետը էլի գալիս են. գալիս են ասըմ.— Բարի իրիկուն, նախրչի ախպեր, ա՛յ քիր, լա՞վ եք:

— Լավ ենք, փառք ասսու

— Նախրչի ախպե՛ր,— ասըմ ա,— դե գնա տերտերին ասա, թող գա էս էրեխին մկրտի:

Էթըմ ա, տերտերին կանչըմ ա, գալիս ա:

— Ողջո՛ւն:

— Օրհնյա տե՛ր,— ասըմ ա,— տերտեր շա՛ն, պատահել ա՝ մենք էկել ենք էս մարթի տունը, էս մարթի կնիկը ազատվել ա, հըմի մենք մունաթ ենք անըմ, որ էս էրեխին մկրտես:

Տերտերը էդ էրեխին մկրտըմ ա, անըմը դնըմ ա Դավիթ, թաքավորն էլ ըլըմ ա քավոր: Տերտերին ինչ որ հասնելու ա՝ տալիս են, տերտերը թողըմ ա էթըմ ա:

Մնըմ ա էքսի առավոտը, էտ մարթիկը պըտի էթան, էս թաքավորը հանըմ ա մի բազմանդ՝ տալիս ա իրա սանամորը, ասըմ ա.— Սա՛նամեր, եփ որ տղեն մենանա, էթա ուրիշ երկրներ, էն վախտը էս բազմանդը կկապես կռնիցը, նոր ճամփու կդնես: Որ ինձ էլ չպատահի, իմ ազգին կպատահի՝ կպահեն:— Ասըմ են ու թողըմ էթըմ դարբշները:

Անցնըմ ա մի տասը, տասնէրկու տարի: Տղեն մենանըմ ա, տենըմ ա՝ իրանց գեղացիք էթըմ են ուրիշ երկրները ֆահլութուն անելու, ինքն էլ իրա մորն ասըմ ա.— Ես էլ պըտի էթամ, բո՛լ ա, ինչ հերս նախրչի ըլի, ես էլ՝ հորթարած:

— Դե,— ասըմ ա,— ա՛յ որթի, դու գիտաս. որ էթըմ ես, արի,— ասըմ ա,— քու քավորդ մի բազմանդ ա տվել, կապեմ կռնիցդ, գնա:

Բազմանդը կապը ա տղի կռնիցը, տղեն ասը ա.—Մնա՛ք բարին, ես էթը եմ:

Ընկնը ա ճամփեն էթը: Շատոն ու քիշը աստված գիտա, մի վայրենի շոլը մի ջրֆոր ա ըլըմ. մի չհրդի տղա էկած ա ըլըմ, էդ ջրֆորի վրա նստած: Էս տղեն տենը ա էդ տղին, ասը ա.—Բարե՞ր, ախակեր:

— Բարով, հազար բարի՞:

— Ախակեր ջա՞ն, — ասը ա, — ո՞ւր ես էթը, ո՞ւրդիանցի ես:

— Ախակեր, — ասը ա, — Ուզականցի եմ ես:

— Ո՞ւմ տղեն ես:

Ասը ա.—Նախրչի Մելքոյի:

— Մորդ անունն ի՞նչ ա:

Ասը ա.—Վառո ա:

— Քու անըմը ի՞նչ ա:

Ասը ա.—Դավիթ:

— է՛հ, էս հենց իմ ախակերն ա: Ա՛յ տնաշեն, — ասը ա, — եւ էլ Աշտարակցի եմ, նախրչի Կարոյի տղեն եմ, մորս անըմն էլ Համազ ա, իմ անըմն էլ Դավիթ ա: Արի ըլենք ես դու ախակեր:

— Ըլե՛նք, ըլե՛նք:

— Դե արի տենանք ո՞րըս ենք էս ջրֆորիցը ջուր հանը, որ հաց ուտենք, խմենք, էթանք:

Մելքոյի տղեն ասը ա.—Ես պուռուր եմ, դու մենձ ես ընձանից. ես ջուրը կհանեմ, հաց կուտենք, կխմենք, կէթանք:

Տղին կախ ա անըմ ֆորը, ջուրը հանը ա, դնը ա դրադ, ասը ա.—Դե ինձ էլ հանա:

Ասը ա.—Զէ՛, չեմ հանիլ:

— Ա՛ ջանը, — ասը ա, — խի՞ չես հանը, ես քեզ ի՞նչ եմ՝ արել: Ասսու սիրու խաթեր, ինչ որ ուզես՝ կտամ, թաք'լի ինձ հանես,

Ասը ա.—Եփ որ էդ կոիդ բազմանդը կտաս ինձ ու երթը՝ կուտես, որ մարթի շասես՝ կհանեմ:

Ասը ա.—Ա՛ռ քեզ:

Ասը ա.—Երթը կեր, որ էլ մարթի շասես:

Ասը ա.—Մարթի շեմ ասի. եփ որ մեռնեմ, Քրիստոս գա դատաստան, կասեմ:

Տղին հանըմ ա, առնըմ բազմանդը կապըմ իրա կռնիցը, ընկնըմ են ճամփա: Շատ ու քիչ՝ աստված գիտա, էթըմ են մի թաքավորի քաղաքի էնտեղ մի քարվանսարըմ մի օթախ են բռնըմ, քշերը՝ քնըմ, ցերեկը՝ էթըմ բանելու Մի կիրակի օր էթըմ են քաղաքը ման գալու էթըմ են թաքավորի պալատը մտիկ անելու. դես են մտիկ անըմ, դեն են մտիկ անըմ. թաքավորը իրա բալկոնըմը կանածած ա ըլըմ, տենըմ ա, որ էրկու տղան կաննած են, համա էն մընի կռանը բազմանդ կա: Սառային ասըմ ա.— Գնա' էն կաննած տղին ասա. ռթաքավորը կանըմ ա քեզա:

Սառեն էթըմ ա, ասըմ ա.— Ա՛յ տղա, ա՛րի, թաքավորը քեզ կանըմ ա:

Տղին իրա հընգորը ասըմ ա.— Հստի կա'ց, էթամ տենամ՝ թաքավորը ի՞նչ ա ասըմ:

Էթըմ ա թաքավորի կուշտը, թաքավորին գլուխ ա տալի:
— Թաքավորն ապրած կենա, — ասըմ ա, — ի՞նչ ես ասըմ:
— Ա՛յ տղա, — ասըմ ա, — ո՞ր երկրիցն ես:

Ասըմ ա. — Ես էրեվանու երկրիցն եմ, Ուշական գեղիցը:
— Ընտեղ, — ասըմ ա, — ո՞մ տղեն ես:

Ասըմ ա. — Նախրչի Մելքոն կա, նրա տղեն եմ:

— Քու անըմը ի՞նչ ա:

— Իմ անըմը Դավիթ ա:

— Լա՛վ, մորդ անըմը ի՞նչ ա:

— Մորս անըմը Վառ ա:

— Քանի տարեկան կըլես դու:

— Տասն իրեք տարու մեջն եմ:

— Ա՛յ տղա, խի՞ ես ըտենց մենձացել, հալիվորել, միրուքդ էկել ա:

Ասըմ ա. — Թաքավորը սադ ըլի, աշքս բաց արի՝ հերս նախրչի էր, ես էլ ֆորթարած, քյասրութոնը ինձ էս օրը քցեց: Իլլաճս կտըրվեց, բաց եմ թողել, էկել էս երկրները:

Թաքավորը ասըմ ա. — Բա էն տղեն քու ի՞նչն ա, որ ընտեղ կաննած ա:

— Հարեւանի տղեն ա, իմ հընգերն ա:

— Դե, — ասըմ ա, — զնա՛, էն տղին ասա, թո էթա իրա բանին, դու արի իմ կուշտը, ինձ տղա ի՛լ. դու իմ սանիկն ես, էդ էլ իմ տված բազմանդն ա: Ես ասել եմ՝ եփոր իմ սանիկը դա ինձ

հասնի, ես նրան ինձ որթի պըտի շինեմ, իմ թաքավորութունն էլ տամ նրան:

Տղեն գնաց հընդորը ասեց, թե.—Դա՛վիթ, դու դու գնա քու բանին կաց. վախի՛ մի, թաքավորը ինձ իրան տղա ա շինըմ. եփոր բանն էլավ, ինչ որ սիրտդ ուզի՛ ես կտամ քեզ: Դե գնա՛, արխեին կաց:

Հընգերը գնաց իրա տեղը, ինքն էլ գնաց թաքավորի կուշտը: Թաքավորը զրկեց դրան համամ, թամուզ լեղացրին, քերին թամուզ շորեր հաքցրին, արին թաքավորի տղա: Մնաց մի էրկու շափաթի՛ մի ամիս ըտեղ, թաքավորը մտածեց, ասեց.—Արի՛ սրան պսակենք, ժամանակին իմ թաքավորութունն էլ տամ սրան:

Վազիրն ու նազիրն ասեցին.—Լավ ես ասըմ, թաքավոր, համախոսքը տղինն ա, կանչենք հարցնենք, տենանք ո՞ւմ ախշիկն առանը:

Թաքավորն ասեց.—Շա՛տ լավ!

Կանչեցին տղին, ասեց.—Ո՛րթի, ես ուզըմ եմ քեզ հարսանիք անեմ, մի լավ մարթի ախշիկ ուզեմ, որ դու ըլես իմ թախտի թաքավոր, նա էլ ըլի թաքուհի:

Ասեց.—Թա՛քավոր, դու գիտաս:

Ասեց.—Ես գիտամ, համա բանը քեզանըմ ա, տենանք ո՞ւմ ախշիկն ես ուզըմ:

Ասեց.—Թաքավոր, ախր էդ ձեր բանն ա, ես ի՞նչ ասեմ:

Ասեց.—Որթի, դու պըտես ասիլ, ա՛սա:

Ասեց.—Թաքավոր, որ ինձ ես հարցնըմ՝ շատ զոռ ա իմ ասածը:

Ասեց.—Ասա՛, որթի, ինչ որ ասես՝ կկատարեմ:

Ասեց.—Թաքավոր, որ ինձ ես ասըմ՝ ես առնըմ եմ Գյուլինան-Բանովշին¹:

Ասեց.—Ա՛յ հա՛յ, էդ շատ դժվար ա, ա՛յ որթի:—Ասեց.—Նազրի ախշիկն առ, վազրի ախշիկն առ, յա մի ուրիշ թաքավորի ախշիկ առ, թե չէ ո՞վ կարա բերի Գյուլինան-Բանովշին:

Ասեց.—Թաքավոր, եփ որ ինձ իրավունք տաս՝ ես բերել կտամ:

Ասեց.—Ես շատ ուրախ կըլնեմ, իրավունք ունես:

¹ Գեղեագույն վարդին, (ծանօթ. բանանվագի):

— Մարթ դրկենք, — ասեց, — իմ հընգործ կանշենք, իմ հընգեց շատ դոշաղ ա, նա կրերի:

— Մարթ դրկա՛, թող կանշեն գա:

Ասեց. — Թաքավոր, ես ինքս կէթամ կրերեմ տղին:

— Դե գնա՛, — ասեց:

Դուս էկավ, գնաց իրա հընգոր կուշտը. — Թարի իրիկում, ա'խպեր:

— Թարով, հազար բարի:

— Եհ, մո՞նց ես, լա՛վ ես:

— Լավ եմ, էլի, ապրօմ ենք. Էս շափաթ մի իրեք մանեթ փող եմ առե:

— Վախիլ մի, ադա, աստված որ աշողացրել ա՛ իրեք մանեթի տեղակ իրեք հազար մանեթ կտամ քեզ, ճամփու կդնեմ: — Ասեց. — Ադա, գիտա՞ս ինչ կա:

— Ի՞նչ:

— Քեզ շատ թաքավորի կշտին գովացել եմ, ասել եմ ըսենց դոշաղ տղա ա իմ ախպերը, էկել եմ քեզ տանեմ, որ էթաս ինձ հըմար ախչիկ ուղես:

— Հա՛յ տնաշեն, ես ո՞րտեղան ախչիկ ուղողն եմ: Ես ի՞նչ գիտամ ախչիկ ուղիւր:

— Այ տունդ շինվի, ի՞նչ ես վախըմ, ինչ որ քե կասենք՝ դու էն արա: Տանըմ եմ քեզ, որ թաքավորը քեզ ճընանչի, որ էն ժամանակը, որ ես թաքավոր ըլեմ՝ դու էլ ըլես իմ նազիրը:

Թե. — Դեհ դու գիտաս, ախպեր, որ ասըմ ես՝ էթանք:

Վե կացան իրանց այնոյինը վե կալան, գնացին թաքավորի կուշտը:

Գնաց տղեն թաքավորին գլուխ տվուց, կաննեց, ասեց. — Թաքավորն ապրած կենա, ի՞նչ ես ասըմ:

Թաքավորն ասեց. — Ես քեզ ասըմ եմ, որ էթաս Գյուլինան-թանովշին ուղես իմ սանիկին. գնա՛, ինչ որ սիրտդ ուղըմ ա, վե կալ ու գնա:

— Թաքավորը սաղ ըլի, — ասեց, — ես ո՞նց էթամ, դու թաքավոր ես՝ չես կարըմ, որ զորք ունես, զոռ ունես. ես ի՞նչ անեմ՝ ոչ մարթ ունեմ, ոչ փող:

Սանիկն ասեց. — Սուս կաց, գնա՛, մի վախիլ, ես քեզ տեղը կասեմ, ուղըմ եմ քեզ լավ մարթ շինեմ, ինչ ուղըմ ես՝ ուզի, գնա՛:

Ասեց. — Թաքավոր, որ ախպերս ասըմ ա՝ կէթամ, համա դարիպ տղա եմ, ինձ մի տասը օր ժամանակ տու, մի հազար մանեթ էլ փող տու, ուտեմ, խմեմ, էս քաղաքը ման գամ, մարթ ճընանշեմ, որ նոր էթամ:

Թաքավորն ասեց. — Շատ լավ, հազար մանեթ տվե՞ք էդ տղին: Էդ տղեն գլուխ տվուց ու դուս էկավ, զնաց քաղաքը. օրը հարիր մանեթ էդ քաղաքըմը ժախսեց՝ ուտըմ էր, խմըմ, դափով, զուռնով քեֆ անըմ: Ինն օր քեֆ արեց, մնաց էն մի օրը, մեկ էլ հարիր մանեթ փող:

Տղեն առավոտը վե կացավ, էրեսը լվաց, ասեց. — Ա'ստված, էսօր հարիր մանեթը ո՞րտե պըտի ուտեմ:

Գնաց քաղաքի դրազին, տեհավ մի մկիտանի դուքան կա. — Բարիլո՛ւ, — ասեց, — խազեին:

— Բարո՛վ, հազար բարի:

Ասեց. — Խազեին, մի տրիցատկա արադ բե՛:

Արազը բերուց:

— Էրկու թաս էլ բե, — ասեց:

Լցրուց էրկու թասը, մինը ինքը վե կալավ, մինն էլ տվուց մկիտանչում:

Ասեց. — Սաղ ըլես, խազեին, աստված բարու հետ ըլի: — **Ասեց.** — Խմա՛, խազեին, էտ էլ դու խմա:

Մի մին էլ խմեցին, հանեց արազի փողը տվուց՝ տասը մանեթ: — Ա՛ռ, խազեին, ես սաղ ըլեմ քու հըմար:

Խազեինը առավ փողը, դրուց դալիսը: Ինքը մտքի հետ ընկավ. ղաֆիլ տեղ էթալը միտքը ընկավ: Զեռը դրուց անգաջին, մտածեց: Խազեինն ասեց. — Ա՛յ տղա, խի՞ ես ըտենց երկար մտածըմ, վախըմ ես տասանոցդ ուտե՞մ: Արազի գինը մի արասի ա, մնացածը ետ կտամ:

Ասեց. — Խազեին, դրա հըմար շեմ մտածըմ, — ասեց, — ես դարդ ունեմ:

Ասեց. — Ա՛յ որթի, ի՞նչ ա դարդդ:

Ասեց. — Թաքավորը ինձ զրկըմ ա էթամ Գյուլինան-Թաճովշին բերեմ: Տասն օր մհուլ ի առել. էսօր թմամըմ ա, էքուց պըտի էթամ, շեմ գիտըմ, թե ի՞նչ անեմ:

Ասեց. — Վա՛յ, այ որթի, էդ ինչ դժվար բան ա. էդ թաքավորը ինքը խի՞ էթըմ, որ քեզ պես մի գյաղի ա դրկըմ:

Ասեց. — Իմ հընգորն առաջըմ էդ ախշիկը, իմ հընգերն էլ ինձ
առ զրկըմ:

— Ա' տղա, — ասեց, — քու ու քու հընգոր մեշ բան կըլի, դու
կարա՞ս էդ ախշիկը բերել:

— Ի՞նչ անեմ, որ զրկըմ են՝ պըտի էթամ, էլի:

— Դե որ պըտի էթաս, ա՛յ որթի, ես պատվերը քի կասեմ:

Ասեց. — Պըտի ծովով էթաս, մի հատ, — ասեց, — ծովի զրադին
գյամի շինել կտաս, որ մեշը սադա շամ-շրադից ըլի. նրա մեշին վե
կունես մի տարեն ուտելիթ, ետո քեզ համար վե կունես տասնէրկու
ձեռք թամուղ թաքավորական շորեր, էնու գյորա էլ փող վե կունես.
վախիլ մի, թաքավորից ինչ ուզես՝ կտա, թաքի էն ախշիկը բերես:
Վե կունես, — ասեց, — մի ուրաք, մի սղոց, մըն էլ մի կծիկ թել,
որ ընչար հազար մղոն երկար ըլի: Ըտոնք որ թաքավորը տվուց,
պրծավ, ընդիան որ նստես գյամին, առաշին սըֆթա մի ձուկ ըռաստ
կգա, էն ձկանը քցա շուրը. ընդիան որ գնացիր, մի ջուր ա գալի՝
ձտնըմ ա ծովի մեշը, ինչքան մրշիմ կա՝ թոփ են էլել ընտեղ, սղո-
ցով մի ծառ կկտրես, ուրաքով կտաշես ու կդնես էն ջորի վլեն, որ
մրշմները անց կենան: Էն մրշմները ժամանակով քեզ կհարկա-
վորին: էնտեղան էլ կէթաս կտենաս, որ մի մենձ ծառի վրա մի
Զմրուռթ զշի բուն կա, նրա ճուտերը ամեն տարի օցը ուտըմ ա,
ընտեղ բուտուն կպահես, օցին կսպանես, էն Զմրուռթ զուշը քեզ
կհարկավորի: Ետո ընդիան էլ կէթաս մի ծովի որադին, մի ծառի
վրի աշխարթը ինչ զդար մեղրաճանճ կա՝ հավաքվել են ընտեղ, էն
թելի տուտը կկապես էն ծառիցը, մի տուտն էլ ձեռիդ կպահես ու
գյամին կբըշես, կէթաս՝ ծովի միշին մի կղզի կա, էն կղզումը մի
ծեր, հալիվոր մարթ կա, կէթաս նրան բարով կտաս, նա քու բարովը
կտանի, քեզ կօրհնի ու կմեռնի, նրա տեղն ընտեղ կփորես, կդնես
փոսի մեշը, ֆողը վրա կտաս, նրանից եննա էլ դու գիտաս, կէթաս,
կըլիս Գյուլինան-Բանովզի քաղաքը, ինչ կանես՝ կանես:

Էն օրն էլ մթնեց, գնաց իրա տեղը քնեց: առավոտը լիսացավ,
շատ թեզ թաքավորի մարթն էկավ կանչեց տարավ. գնաց թաքա-
վորի կուշտը, թաքավորն ասեց. — Հը՛, ա՛յ տղա, պրծա՞ր, քեֆդ
արիր, վերլացրիր, լավ մարթիկ ճանչեցի՞ր: Հըմի ի՞նչ ես ասըմ,
կէթա՞ս:

— Թաքավորը սաղ ըլի, կէթամ, ընշի՞ հըմար շեմ էթա:

Թաքավորն ասեց. — Որթի, դե ուզա՝ տենամ ինչ ես ուզելու
ջու ճամփի հըմար:

Ասեց. — Թաքավորը սաղ ըլի, քեզ էլ հայտնի ա, որ պըտի՝ ծովովը էթանք:

Ասեց. — Հայտնի ա, որթի:

— Ես ուզըմ եմ, — ասեց, — ծովի ղրաղին մի գյամի պատրաստեն, շատ լավը, մեշը շամ-շրաղից:

Ասեց. — Էլ բան ուզա, որթի:

— Նրա մեջն, — ասեց, — մի տարեն ուստելիք, իմ ու իմ գյամ-շու հըմար ուզըմ եմ տասներկու ձեռք շոր, մինը մնիցը լավ, ուզըմ եմ մի տասը հազար մանեթ փող, մի սղոց, մի ուրաք, մի կծիկ թել, ուսնենա հազար-հազար արշին երկարութուն, ինձ հըմար մի լավ թուր, մի բահ, մի քլունդ, էլ ուշնչ բան շեմ ուզըմ:

— Դե, — ասեց, — գնա, հինգ օրից եննա պատրաստ կըլի-ամեն բանը:

Հինգ օրը թամամեց, տղին կանչեցին, լավ պատիկ տվին, ճամփու քցեցին, գնաց: Նստեց գյամու մեշը, ընկավ ծովի էրեսը: Տղեն ասեց. — Գյամշի, ուշըդ վրեդ պահա, մի մենձ ձուկը պըտիք առաշներս, շղլումը վեր ընկած:

Գյամշին մտիկ անելով էթըմ էր, Տեհավ ձուկը ղրաղին վեր ընկած ա, ասեց. — Թաքավորի որթի, հրե՛ս ձուկը:

Թաքավորի տղեն ասեց. — Գյամին կաննացրա:

Գյամին կաննացրին, թաքավորի տղեն գյամուցը վեր էկավ, ձուկը թոլ արեց, քցեց ջուրը. ձուկը ծովիցը ձեն տվուց, ասեց. — Գնա՛, մի վախիլ, թաքավորի որթի:

Եննա գյամին քշեցին, գնացին մի առվի թուշ էլան: Տեհան որաշխարհը ինչ զըդար մրշիմ կա՛ ըտեղ թոփ ա ըլել: Ասեց. — Գյամշի, կաննացրա գյամին:

Տղեն գյամուցը վեր էկավ, գնաց սղոցով մի մենձ փետ կտրեց, ուրաքով էրեսը տաշեց, քցեց էտ առվի վրին: Մըլըմներն ընկանճամփա ու գնացին: Ետի մի մրշիմը իրա ոտը կտրեց, տվուց տղին, ասեց. — Առ էս ոտս, գնա՛, աստված քեզ հետ, մի վախենալ, ինչ վախտ որ նեղ տեղ ընկնես՝ մեղ իմաց տու:

Էլի գյամին քշեցին, գնացին մի մենձ ծառի ուստ էկան: Տեհան դրուստ գրա վրին մի մենձ Զմբուռթ զշի բուն կա. ճուտերը մեջն են, միայն զուշը ըտեղ չի: Ասեց. — Գյամշի, գյամին կաննացրու՝ տենանք:

Իսքը գնաց ծառի տակը, ընտե մնաց մի հ'իրեք օր, կացավ

թարուն, բուտուն քաշեց, Տեհավլ ըհը՛, հրես վիշապն էկավ, Վիշապը
ուզեցավ ծառը նի ըլլի՛ էն սհաթը թուրը քաշեց, Վիշապին տվուց,
մեշտեղից էրկու կտոր արուց, եննա մանդր-մանդր կոտորեց թրով,
ինքը քաշվեց մի շվաք, քոնը տարավ՝ քնեց: Ճաշը թեքվել էր. իրիկ-
նապահ էր, դուշը իրա տեղից էկավ, հեռվանց տեհավ, որ մի հո-
ղածին իրանց ծառի տակին քնած ա: Ասեց.— Ա՛յ հա՛յ, էս ա ամեն
տարի իմ ճուտերը ուտըմ, իմ թշնամին էս ա:— Գնաց, որ մի ահա-
գին քար ճանկերով վեր ունի, բերի քցի գլխին:

Ասոււ հրամանքովը իրա ճուտերը լիզվավորեցին.— Ամա՛ն,
ա՛յ մեր, մեղ ազատողը դա ա, դրան մի սպանի:

Մերն իրա ճուտերին լսեց, գնաց ճուտերի կուշտը, ճուտերն
ասեցին.— Ա՛յ մեր, դե մտիկ արա, տես վիշապի ջանդաքը ինչդար
ա կոտորել, ըստեղ վեր ածել:

Մերը տեհավ վիշապի ջանդաքը, գնաց տղի վրեն թևը հով ըըռ-
նեց, տղեն քնեց: Տղեն աշքը բաց արուց, զարդանդեց. դուշն
ասեց.— Էլ մի վախենալ, թաքավորի որթի, ինչ որ ուզըմ ես՝ ուզա:

Ասեց.— Ղո՛ւշ, հեշ բան շեմ ուզըմ:

Ասեց.— Դե առ էս իմ բմբըլից մինը տամ, եփ որ նեղ տեղ
կընկնես՝ ինձ իմաց կըտաս:

Տղեն բմբուն առավ, գնաց նստեց գյամին, գյամին քշեց
գնաց: Գնացին էն ծառին հասան, որ մեղրաճանճերը սաղ էլ ըտեղ
ին թոփ էլել: Տղեն թելի մի տուտը կապեց ծառիցը, մի տուտն էլ
կապեց գյամուց, գյամին քշեցին: Գնացին հասան էն կղզին: Տղեն
գյամուցը վեր էկավ, գնաց ըտեղ, տեհավ որ դրուտ հալիվորը
ըտեղ ա:

Ասեց.— Բարի օր, բարի:

Թե.— Բարո՛վ, հազար բարին, բալա ջան: Աստված քեզ աշո-
ղութուն տա, աստված օրհնի քեզ: Ես մեռնըմ եմ, ինձ կթաղես:—
Ասեց ու հալիվորը մեռավ:

Տղեն առավ բահն ու քլունկը, գետինը խոր փոս արուց, հալի-
վորին թաղեց: Գնաց նստեց գյամին, քշեցին գնացին: Գնա՛ցին,
դեմ էլան Գյուլինան-Բանովչի քաղաքին: Գյամշին գյամին կան-
նացրուց, լամբարները¹ վե թողուց: Տղեն ասեց.— Գյամշի, էս
գյամին քե ամանաթ, կուտես, կխմես, էս գյամին կպահես, ես գնաց
քաղաք, մի տենամ ինչ կա:

¹ Եղթաները, (ծանոք. բանանավագի):

Տղեն գնաց քաղաքը, յավաշ-յավաշ ման էկավ քաղաքը. ընդի
մտիկ անելով տեհավ մի դռան առաջի մի պառավ կնիկ մի մեծ
թեշի ձեռին օլորըմ ա:

— Բարի օր,— ասեց,— նանի:

Ասեց.— Բարով, հազար բարով, նանը քեզ դուրբան:

Ասեց.— Նանի, ինձ զոնաղ չե՞ս վեր ունիլ:

Ասեց.— Խի՛ չեմ վեր ունիլ, համեցեք:

Նանը տղին արավ տուն, տղեն տեհավ նանենց տունը դար-
տակ ա, ասեց.— Նանի ջան, բա ի՛նչ կա ուտելու:

Ասեց.— Որթի, ցամաք հաց, էն էլ գարի:

Ասեց.— Նանի, առ փող տամ, գնա բազարիցը բան բե, ուտեմ,
սոված եմ:— Հանեց տղեն տվուց նանին մի բուռը ոսկի: Նանի ջա-
նին էր մոմնաթ, քշտըվեց, գնաց բազարը, առավ ուտելիք, խմե-
լիք, բերուց տուն, տղի հետ նստեցին կերան ու խմեցին:

Ասեց.— Նանի, ես դարիք տղա եմ, ըսկի էս երկրները չեմ
էկել, ի՛նչ կա էս քաղաքըմը:

Թե.— Այ որթի, քաղաք ա, ի՛նչ ասես՝ կա: Մեծ մայրաքա-
ղաք ա, թաքավորը միշին:

Ասեց.— Նանի՛, թաքավորին ի՛նչ ունի, ի՛նչ շունի:

Ասեց.— Որթի, ուզըմ ես դու էլ բան իմանա՞ս:

Թե.— Բա դարիպ տղա եմ, ախր ուզըմ եմ իմանամ:

Թե.— Որթի, թաքավորին մի ախչիկ ունի, քրքրվի էն թավուր
ախչիկը:

— Նանի՛, խի՛ ես ըտենց ասըմ, ի՛նչ ա արել էդ ախչիկը:

Թե.— Որթի,— ասեց,— քեզ պես հարիր տղի գլուխ կտրիլ ա
տվել, դրել բագանի¹ վրեն:

Թե.— Ախր նանի, պատճառն ի՛նչ ա, ընչի՛ հըմար ա կտրիլ
տվել:

Թե.— Այ որթի, ինքը շատ սիրուն ախչիկ ա, արևին ասըմ ա՝
դու մի գա, որ ես դու եմ գալի. ինչ անես, որ հնարներ ունի.
ինչ տղա որ էթըմ ա ուզելու, էն հնարներ ա ասըմ, նրանք չեն
կարըմ հանի, նըրա հըմար էլ գլխները կտրըմ ա:

Ասըմ ա.— Նանի, էսօր մնաս բարին, էքուց էլի քու զոնաղն եմ:

Հանըմ ա փող ա տալի նանին, ասըմ ա.— Կէթաս քաղաքը,

¹ Պարիսա, (ծանոք. բանահավանի):

մի ձեռք շոր կառնես քեզ հըմար, որ թաքավորի լայեղ ըլի:— Ասըմ
ա տղին ու դու ա գալի ըտեղան, էթըմ հասնըմ գյամու, դուռը
ծեծըմ ա, գյամշին դուռը բաց ա անըմ.— Բարի իրիկուն,— ասըմ ա
գյամշուն:

— Ասսո՛ւ բարին, հաղար բարի:

Գյամշին ասըմ ա.— Թաքավորի տղա, ասա տենանք, ինչ կար,
ի՞նչ շկար քաղաքըմը:

— Ե, ի՞նչ ասեմ, գյամշի, ինչ ասես կա, էքուց մի լավ խաբար
կբերեմ,— ասըմ ա ու քշերը ըտեղ քնըմ:

Առավոտը լիսանըմ ա, տղին վեր ա կենըմ, էլի էթըմ քաղաքը,
դուդ պառավի տունը:

Ասըմ ա.— Բարով քեզ, ա՛յ նանի:

— Հաղար բարի էկա՛ր, շանի:

Ասըմ ա.— Նանի շան, շորերը առել, հազրե՛լ ես:

Ասըմ ա.— Առել եմ, որթի շան:

— Դե բե, — ասըմ ա, — հաքի, տենանք:

Նանը շորերը բերըմ ա, հաքնըմ ա:

— Է՞ֆ, — ասըմ ա, — նանի շան, ի՞նչ լավ սազըմ ա, դառար
վազրի կնիկ, կասես՝ օխտն օր իմ մերն ըլես:— Ասըմ ա.— Նանի,
գիտաս ինչ կա՛:

Ասըմ ա.— Ի՞նչ կա, որթի շան:

— Պըտես էթալ Գյուկինան-Բանովշին ուզիլ ինձ:

Ասըմ ա.— Ա՛յ որթի, ես ո՞նց էթամ էնտեղ, թաքավորը ինձ
ախշի՛կ կտա:

Ասըմ ա.— Կտա, բան չի ասիլ, — հանըմ ա մի բուռ ոսկի տա-
լիս ա, ասըմ ա, — Գնա:

Պառավը ոսկին առնըմ ա, ուրախանըմ, ասըմ ա.— Որ ասըմ
ես, որթի, կէթամ:

Պառավը ընկնըմ ա ճամփեն, էթըմ, հասնըմ թաքավորի դուռը,
խնամքարին նստըմ ա:

Նրանց ժառեն դու ա գալի. — Հը՛, — ասըմ ա, — ի՞նչ կնիկ
ես, ըտե նստել ես:

Ասըմ ա.— Էկել եմ թաքավորի ախշիկը ուզեմ իմ տղին:

Ասըմ ա.— Շատ լավ, էթամ թաքավորին իմաց տամ:

Մառեն էթըմ ա թաքավորի կուշտը, թաքավորին գլուխ ա տա-
լի, կաննըմ:

Թաքավորն ասըմ ա.—Թարով, հազար բարի, նանի,—տեղ
աշանց տալի, ասըմ ա,—Արի ըստե նստի: Հը',—ասըմ ա,—նա-
նի, ի՞նչ ես ասըմ, ի՞նչ կա:

Ասըմ ա.—Թաքավորը սաղ ըլի, էկել եմ Գյուլինան-Թանով-
շին ուղեմ իմ տղին:

Ասըմ ա.—Շատ լավ ես արել, նանի: Դե, յավաշ Գյուլինան-
Թանովշին կանչենք, տենանք ի՞նչ ա ասըմ:

Պառավն ասըմ ա.—Դու գիտաս:

Մարթ են զրկում Գյուլինան-Թանովշին կանչըմ են: Գյուլինան-
Թանովշեն գալիս ա թաքավորի կուշտը:

Թաքավորը ասըմ ա.—Հը, էս մեծ կնիկն էկել ա քեզ ուղի իրա
տղին, կառնե՞ս:

— Թաքավորը սաղ ըլի,— ասըմ ա,— ի՞նչի՞ չեմ առնի, կառ-
նեմ, համա զրա տղեն իմ հնարները. որ հանի, ես էլ կառնեմ:

— Պառավ,— ասըմ ա թաքավորը,— լսեցի՞ր, որ իմ ախշիկը
քու տղին առնըմ ա. մենակ քու տղեն պիտի գա ըստեղ՝ տենանք,
որ հնարները ասենք, տղեդ հանի, որ ախշիկը տամ տանի:

— Շատ լավ,— ասըմ ա պառավը,— էթամ զրկեմ, գա:

Պառավը վեր ա կենըմ, էթըմ, հասնըմ տղի կուշտը: Տղեն
ասըմ ա.— Հը', նանի՞ ջան, ի՞նչ կա, ի՞նչ չկա:

— Տո եսի՞մ, իմ որթի, ես գիտամ ի՞նչ կա, էնա փիս են, է'լի.
ասըմ ա, որ տղեդ պտի ըստեղ գա, որ հնարները ասենք, հանի, հն-
նա մեր ախշիկը տանք իրան:

Ասըմ ա.— Շատ լավ, էթամ:

Տղեն վեր ա կենըմ, էթըմ թաքավորի կուշտը, թաքավորն ասըմ
ա.— Հը', դու ես էն տղեն, որ իմ ախշիկը ուղըմ ես:

Ասըմ ա.— Ես եմ, թաքավորն ապրած կենա:

— Դե,— ասըմ ա,— գիտա՞ս ինչ կա, տղա: Հըրե էն մեյդա-
նըմը, հարիր խալվար ցորեն, հարիր խալվար գարի, հարիր խալ-
վար էլ կորեկ իրար խառնած, մի տեղ շեղջ արած ա, էս մի քշերվա-
միշին թե. իրարից ջոկեցիր՝ ախշիկը կտամ քեզ, թե չէ՝ գլուխդ
կկտրենք, կդնենք էս բադանի վրեն:

Ասըմ ա.— Շատ լավ, թաքավորը սաղ ըլի:

Տղեն դու ա գալի ու դուզ էթըմ գյամատոմը, ասըմ ա.—
Գյամշի, թաքավորը էս թամբահը տվել ա, ո՞նց անենք, ի՞նչ զդար
ֆահլա բռնենք, որ մի քշերվա միշին իրարից ջոկեն:

Դես են մտածըմ, դեն են մտածըմ, գյամշին ասըմ ա.— Թաքավորի որթի, էն ժամանակը որ մրշըմներին ճամփա շանց տվիրախոր նրանք ասեցին, թե որ նեղ տեղը ընկնես՝ մեզ իմաց արա:

— Հա,— ասեց,— էդ լավ ես ասըմ, էդ լավ էլավ:

Մրշըմի ուղը իրար տվուց, աշխարքըմը էլ մրշը չկար, ինչ կաէկան:

Մրշըմներն ասեցին.— Հը՛, թաքավորի որթի, ի՞նչ նեղ տեղն ես ընկել:

Ասեց.— Մրշըմներ, ձեր ասսու սիրուն, ըսենց մի նեղ տեղն եմ ընկել, պըտի մի բան անեք:

Թե.— Ի՞նչ բան:

Տղեն ասեց.— Թաքավորը հարիր խալվար ցորեն, հարիր խալվար գարի, հարիր խալվար կորեկ իրար ա խառնել, պըտի չոկեք, շոկ-շոկ շեղշ անեք:

Մրշըմները ասեցին.— Շատ լավ, դու արի մեզ տեղը շանց տու:

Թաքավորի տղեն դրանցից մի քանիսը վե կալավ, տարավ տեղը շանց տվուց, էկավ: Մուկին ընկավ. ինչ դդար մրշիմ կար՝ էկան, հիրեք մասի բաժանվեցին, մի մասը ցորենը կրեց, մի մասը՝ գարին, մի մասը՝ կորեկը, տարան շոկ-շոկ տեղ շեղշ արին, ընենց որ իրա տակի ֆոլն էլ մնաց տակին: Պրծան մրշըմները, մնաս բարով ասեցին ու գնացին: Տղեն էդ քշեր ընշար լիս դարավուլ մնաց, ասեց.— Զըլի թե թշնամին գա, խառնի:

Առավոտը լիսացավ, գնաց թաքավորի կուշտը, ասեց.— Թաքավորն ապրած կենա, համեցեք, տեհեք, շոկել եմ:

Թաքավորը վե կալավ իրա նազիր-վազրին, գնացին տեհանընենց մի շոկել ա զարմանալի, իրա զորքն էլ որ թոփ ըլեր, չէր զարա էդպես շոկի:

Թաքավորն ասեց.— Ապրես, ա՛յ տղա, արժան ա որթի, քեզ: — Դե,— ասեց,— գնա քու տեղը, քու մորն էլ եննա ասա գա:

Գնաց իրա մոր կուշտը.— Հը՛, ասեց,— որթի շան, ի՞նչ արիր:

Ասեց.— Նանի շան, բանն աշող ա, էլի պտի գնաս թաքավորի-կուշտը, տե՛ս, էլի ի՞նչ ա ասըմ:

Ասեց.— Շատ լավ, էթամ:

Պառավը հաքավ կրկին թամուզ շորերը, գնաց թաքավորի-կուշտը, էս հետը առանց հրամանի նեքսև մտավ թաքավորի կուշ-

տը թաքավորին գլուխ տվուց, կաննեց: Թաքավորը տեղ շանց տվուց, նստեց:

Ասեց.— Նանի՛, ապրի քու տղեն, շատ զոշադ էր, հըմի էլ մի քան կա, — ասեց, — էն էլ հանի, իմ ախշիկը տանի: — Ասեց.— Նանի՛, հըրե՞ն, էն պումուր կոնդը տենը՝^մ ես:

Պառավը թե. — Տենը՝ եմ:

Ասեց.— Իմ հոր մուհըրը մի շայնըկի վրեն տված, մեշը անմահական ջուրը լիքը, անմահական խնձորը միշին, էն կոնդի տակին ա, եփ որ քու տղեն էն կոնդը օխտը սհաթը մը վե կալավ ու իմ շայնիկը բերուց ինձ, ախշիկս կտամ:

Ասեց.— Շատ լավ թաքավոր:

Ասեց ու պառավը հեռացավ թաքավորի կշտից, էկավ տղի կուշտը:

Տղեն ասեց.— Հը՛, նանի ջան, ի՞նչ կա:

Ասեց.— Ո՞րթի, հըմի էլ ասեց՝ էն կոնդի տակին իմ հոր շայնիկն ա, մեշը անմահական ջուր, անմահական խնձոր, թե օխտը սհաթը մը հանեցիր՝ զաթի ախշիկը կառնես կէթաս, թե շհանեցիր՝ գլուխդ կկտրեն:

— Դե որ ասել ա, պըտի հանենք, թե չէ գլուխս թող կտրի:

Տղեն ասեց ու թողեց գնաց գյամին, գնաց գյամլու կուշտը, ասեց.— Գյամլի, ի՞նչ անենք, ախր հըմիկ էլ էս բանն ա ասել:

Գյամլին ասեց.— Թա՛, էդ ի՞նչ դժար ա: — Ասեց.— Թաքավուրի որթի, էն վախտը, որ դշի ճտերը ազատեցիր, զուշը քեզ բմբուզը տվուց, որ նեղ տեղն ընկնելուա տաս. մի կանչի տենենք ի՞նչ ա ասըմ:

Տղեն բմբուզը իրար քսեց, զուշը թովուալեն էկավ:

— Հը՛, — ասեց, — թաքավորի որթի, ի՞նչ նեղ տեղն ես ընկել:

Տղեն ասեց.— Զմբութ զուշ; իմը՝ դու, քունն՝ աստված, ըսենց մի նեղ տեղ եմ ընկել, պըտի ճար անես:

— Հա՛յ, — ասեց, — մի իրեք տարի աղաք ըլեր, մեծացել եմ, հա՛մա ինչ արած, գնա օխտը որց ոչխար¹ թե, ուտեմ, էթամ շայնիկը հանեմ, բերեմ:

Տղեն էթը՝ ա, օխտը որց ոչխար ա բերըմ, օխտն օր էլ թաքավորից հրաման առնըմ:

¹ Իրեք տարեկանից բարձր կրտած խոյ, (ծանար. քանասացի և քանավագի):

Զմբուտթ զուշը օրը մի որց ուտքմ ա, օխտն օրը որ թամամըմ
ա, ասըմ ա.— Գիտե՞ս ինչ կա, թաքավորի տղա. կէթաս էն կոնդիցը
մի հինգ լոր¹ հեռավորութան մի խոր փոս կքանդես, նի կմննես
էն փոսի մեշը, ևս պըտի նի ըլնեմ երկինքը, ընդիան թևերս թափ-
տալով պըտի գամ, որ էդ կոնդը պատոի մեշտեղիցը. դու էլ ղայիմ-
կաց էն փոսըմը, շվախենաս: Մտիկ արա. կոնդը որ պատոեց, շայ-
նիկը էրևաց, դու դու արի, շայնիկը վե կալ ու հեռացի:

Ասեց.— Շատ լավ:

Ինչ որ զուշն ասեց, տղեն էլ կատարեց: Ղուշը էլավ երկինքը,
ընտեղան թևերը թափ տալով որ էկավ, էտ կոնդը մեշտեղից պա-
տըովեց, շայնիկը բաց էլավ: Տղեն գնաց շայնիկը վե կալավ ու հե-
ռացավ: Ղուշը էլի գնաց իրա գործին, Տղեն էլ գնաց գյամատունը:
Գյամշին ասեց.— Բերի՞ր:

Թե.— Բերել եմ:

— Դե, որ,— ասեց,— բերել ես, էս մի բանն էլ ես ասեմ:
Դնա,— ասեց,— բաղաքիցը մի շայնիկ առ թե, էս ջուրն ու խնձորը
ածենք էն շայնըկի մեշը, ժամանակին քեզ կհարկավորի: Խամ ջուր,
մի կարմիր խնձոր քցենք մեշը տանք թաքավորին, էն իրա հոր մուհ-
րիցը կճընանչի իրա շայնիկը:

Ինչ որ ասեց՝ տղեն էլ կատարեց, վե կալավ թաքավորի շայ-
նիկը տարավ տվուց թաքավորին: Թաքավորը մտիկ արուց մուհ-
րին, տեհավ որ իրենցն ա, ասեց.— Ապրիս, այ տղա, հալալ ա իմ
ախշիկը քեզ:

Կանշեց ախշկանը, ասեց.— Որթի, ինչ ասել ենք, էս տղեն
կատարել ա, հըմի ի՞նչ ես ասըմ:

— Ինչ ասեմ, թաքավոր, էնա պըտի առնեմ էլի, համա,—
ասեց,— թաքավոր, էքուց ես քառասուն ախշկա հետ միասին կհաք-
նըկինք, կէթանք բաղը, էն տղեն թող գա, ում որ ջոկեց, առնի էթա:

Տղեն գնաց գյամատունը, ասեց.— Գյամշի, հըմի էլ ըսենց-
ասեց, ախր ես ախշկանը ըսկի շեմ տեհել, ես ո՞նց ճնանշեմ: Մտա-
ծեցին, գյամըշին ասեց.— էն ժամանակը մենք մեղուներին ճամփա-
շանց տվինք, ետի ճանճը թևը տվուց, ասեց. ոնեղ ընկնելուա մեզ
իմաց արա՞ս: Կանշի, տենանք ի՞նչ կասեն:

Տղեն մեղրաճանճի թևը քսեց իրար, մեղրաճանճերը էկան,-

¹ Թայլ, (ծանոր. բանանավաբի):

ասեցին. — Հը՛, թաքավորի որթի, ի՞նչ կա, ի՞նչ նեղ ես ընկել, որ մեղ ուզըմ ես:

Ասեց. — Ճանձեր ջան, ըսենց մի բան ապատահել, պըտի օքնեք:

Ասեցին. — Շատ լավ, որ նրանք կէթան իգին, ոռւ էլ հետները կէթաս, մենք էլ էրթկովը կգանք, որին որ վրա կտանք, նա ա Գյուլինան-Բանովշեն, կգաս ու ղայիմ կրոնես:

Առավոտը տղին վե կացավ գնաց բաղը, տեհավ ախշկեքը էկան, քառասուն ախշիկ, մինը մնիցը սիրուն, իշկա էլ¹ մի տեսակ շորերով: Տղին ասեց. — Յարաբ աստված, ըստոնց ո՞րն ա Գյուլինան-Բանովշեն:

Ախշկեքը բարև տվին տղին, անց կացան: Տղին մտիկ արուց, տեհավ ճանձերը էկան, ճանձերն էն դդար շատ էին, որ արևի աղաքը առել էին, էկան էն դդարն էլ² թափեցին Գյուլինան-Բանովշիդիսին: Տղին գնաց ու ձեռը բռնեց, ասեց. — Օրհնած ճանձեր, թողեք հեռացեք:

Ճանձերը թողին հեռացան: Կուռը բռնեց, ասելոն, խոսալոն էկան թաքավորի կուշտը:

Թաքավորն ասեց. — Որթի, արժան ա քեզ իմ ախշիկը: Հըմի, — ասեց, — որթի, ի՞նչ ես ասըմ, ուզըմ ես ըստե՞ղ կենաս, թե հետդատանես:

Տղին ասեց. — Թաքավորն ապրած կենա, ես էլ մի թաքավորի որթի եմ, պըտի տանեմ իմ հորը հանձնեմ:

Թաքավորն ասեց. — Շատ լավ, ընչո՞վ պըտի էթաք:

Ասեց. — Թաքավոր, ինձ գյամի ունեմ, ամեն ինչ պատրաստ, էթանք, տեհեք իմ գյամին:

— Դե՛հ, էթանք:

Թաքավոր-թաքուհի, իրա նազիր-վազիրը գնացին գյամին տեհնալու:

Գնացին հասան գյամու կուշտը, նի մտան գյամին, տեհան՝ օ՛ֆ, շատ լավ գյամի ա: Ասեց. — Հավան եմ, որթի, լավն ա:

Էդտեղ նստեցին, հանգստացան, կերան խմեցին, ետ դառան: Թաքավորը իրա ախշկա բաժինքը պատրաստեց, տվեց տղին, ճամփու դրուց:

¹ Թողորն էլ, (ծանոր. քանանավարի):

² Այնքանն էլ, (ծանոր. քանանավարի):

Տղեն ու ախշիկը նստեցին գյամին, գյամշին գյամին քշեց։ Դնացին հասան ծովի կեսը, Գյուլինան-Բանովշեն ասեց։ — Դավիթ, ի՞նչ հաղալու բան ունես՝ մի քիչ հաղ անենք։

Ասեց. — Գյուլինան-Բանովշա, պապիդ անմահական խնձորն ու շուրջ բերել եմ, ուզըմ ես, բերեմ՝ հաղ անենք։

Ասեց. — Էտ ինչ լավ ես արել, դե բեր, — ասեց։

Ղութու գուոր բաց արեց, շայնիկը հանեց, տվուց ախշկանը։ Ախշիկը շատ ուրախացավ։ Խնձորը հանեց, գյամու մի դիհը ինքը կայնեց, մի դիհը Դավիթը, իրար քցըմ, հաղ ին անըմ։ Մեկ էլ ախշիկը խնձորը քցեց, փանջարովը ընկավ ծովը, մին էլ տեհան՝ գյամին ետ դառավ դըբա ախշկա հոր տոմը։

Ախշիկն ու տղին. — Վայ, աստված ջան, էս ինչ էլավ, — ասըմ են ու լաց ըլնըմ։ Մեկ էլ ձուկը ծովիցը դեմը դեմ տվուց ու գյամին կայնացրուց։ — Հը՛, — ասեց, — թաքավորի որթի, ի՞նչ նեղ տեղն ես ընկել, ասա տենանք։

Ասեց. — Ամա՞ն, ձուկ ջան, մի հնար արա, ախշիկը խնձորը քցեց ծովը, գյամին ետ ա դառել իրա հոր տոմը։

Զուկը իրա ձկներին ասեց. — Հը՛, որտեղ ըլի՛ խնձորը քթեք բերեք։ — Ձկները էն սհաթը խնձորը քթան, բերին։

Տղեն խնձորն առավ, դրուց շայնըկի մելը, դրուց զութու մելը, զուոր շինեց։ Գյամին ետ դառավ դըբա Դավիթի երկիրը։ Գնա՞ց, ծովը կտրեց, զուա էկավ դըաղը։

Արի, խարարը հարցնենք թաքավորիցը. թաքավորը տեղից զորք, զորապետ վե կալավ գնաց դըբա ծովը՝ Գյուլինան-Բանովշի առաջը։

Ըտեղ Դավիթը ասեց. — Գյուլինան-Բանովշա, ընշար հըմի մենք քիր ու ախպեր ենք ըլել, սրանից ետն էլ քիր ու ախպեր կմնանք, ես քեզ բերել եմ էս տղի հըմար։

Ըտեղ միսելի Գյուլինան-Բանովշեն տիրեց։ Թաքավոր, թաքուհի, նազիր-վազիր էկան բարովեցին, ծովի զրաղիցը կուռ-կոփ տվին, քեֆ անելով բերին հասցրին իրենց տեղը։ Ըտեղ օխտն օր, օխտը քշեր հարսանիք արեցին։ Հարսանիքը նստած վախտը Գյուլինան-Բանովշեն տեհավ, որ իրան բերող տղեն ըստեղ շի. ասեց. — Թաքավոր, — ասեց, — էս հարսանիքը էն տղի հունարն ա, խի՞ շես էն տղին էլ կանչըմ ըստեղ։

Թաքավորը իրա սանիկին ասեց, թե.— **Ղրկա** քու հավատարիմը գա:— **Ղրկեցին**, **Դավիթը** էկավ: Է՛հ, ախչիկը կանչեց, իրակշտին նստացրուց, կերան, խմեցին, հացկերութիւնն էլ պրծավ, հըմի էլ ամենքը իրանց հըմար հաղըմ են, ուրախութուն անըմ:

Զհըդի **Դավիթը** հայի **Դավիթին** ասեց.— **Ա՛րի՝** էթանք մխելիման գանք: Դուս էկան, գնացին քաղաքից դուս թաքավորական ախպուր կար, նստեցին կողքին, կերան խմեցին: **Գյուլինան-Բանովզեն** դուրսինով մտիկ էր տալի էտ էրկսին, թե ինչ են անըմ: **Մեկ** էլ տեհավ, որ զհըդի **Դավիթը** քաշեց խանշալը, տվուց հայ **Դավիթի մեշքին**, արինը շըռուց. խտրտեցին, տարան կոխեցին շընդըլի¹ տակը: **Մի** քիչ եննաշ զհըդի **Դավիթը** ուրախութուախ էկավ տում: **Գյուլինան-Բանովզեն** վե կալավ իրա զարավաշներից մինը, մեկ էլ անմահական ջուրն ու խնձորը, գնաց էդ ախպուրը, շընդըլի միշից **Դավիթին** հանեց, բերեց յարեքը լվաց, անմահական ջուրը լցրուց վրեն, անմահական խնձորը քթին դեմ արեց, ֆոքին էկավ տեղը:

Դավիթին ասեց.— Օ՛ֆ, էս ինչ լավ է՛լավ, որ ես սաղացա:

Ախչիկն ասեց.— **Ա՛յ** տնաշեն, էտ դու նրան ի՞նչ իր արել, որ քու արած լավութան տեղակ քեզ բերուց ըստեղ սըպանեց:

Ասեց.— **Գյուլինան-Բանովզա**, ես երթվիլ ի, որ մահանամ, հարութեն առնեմ, նոր պատմեմ:

— **Դե** ասա, տենանք:

Ասեց.— էն տղի կոփ բազմանդը իմն ա, ես եմ էդ թաքավորի սանիկը, նա ինձ խափեց, բազմանդը ինձանից առավ ու երթըմ տվեց, որ ոչ մի մարթի բան շասեմ, ընչար որ մեռնեմ, նոր հարութան օրն ասեմ: Հըմի որ մեռել եմ ու հարութուն առել, ասըմ եմ:

Գյուլինան-Բանովզեն ասեց.— **Դե** որ ըտենց ա, էթանք վիրւ թաքավորի մոտ, ես գիտամ էն:

Վե կացան, գնացին թաքավորի կուշտը: **Գյուլինան-Բանովզեն** ասեց.— **Թաքավորը** սաղ ըլի, ինչքան հարսանքավոր կա թող թոփ ըլի ըստեղ, ես մի քանի խոսք ունեմ ասելու:

Իշկա էլ թոփ էլան, **Գյուլինան-Բանովզեն** ասեց.— **Թաքավորը** էս տղեն քու ի՞նչն ա, որ էս զդար ծախս ես անըմ, թաքավորութունդ տալիս ես սրան:

Ասեց.— Իմ սանիկն ա:

¹ Կարկառ, (ծանոր. քանանավաբի):

Ասեց. — Բա էս տղեն քու ի՞նչն ա, որ ինձ բերուց:

Թաքավորն ասեց. — Եդ էլ իմ սանիկի հընգերն ա:

Ասեց. — Որ քու սանիկի հընգերն էր, խի՞ էր սրան մորթըմ, կոխըմ շընզըի տակը, որ ես ու իմ դարավաշն ենք գնացել, հանել, ջավացրել բերել ըստեղ:

Թաքավորն ասեց. — Սանիկ, ըտե՞նց ես արել:

Ասեց. — Զէ՛, թաքավոր, ես ըտենց չեմ արել:

Գյուլինան-Բանովշեն ասեց. — Այ տղա, դեհ դու ասա, քու գլխիդ ի՞նչ ա հաղացել:

Հայի Դավիթը գլխանց պատմեց, թե ոնց խափեց իրեն, բազմանդը առավ ձեռիցը, եննա էլ տարավ սըպանեց. **Գյուլինան-Բանովշեն էկավ հանեց սաղացրեց:**

Թաքավորը ասեց. — Այ տղա, ըտե՞նց ա:

Ասեց. — Ըտենց ա:

— Դե, — ասեց, — շամիաթ, ի՞նչ անենք սրան:

Ասեցին. — **Թաքավոր,** կտոր-կտոր արեք:

Թաքավորը կանչեց. — Ջանլա'թ:

Ջանլաթը էկավ էդ շհըդի տղին դրեց տախտակի վրին, կոտորեց, մեծ թիքեն թողեց հանգաջը:

Եննա, նորից օխտն օր, օխտը թշեր հարսանիք արին, **Գյուլինան-Բանովշին** պսակեցին **Դավիթի հետ,** դրին թաքավոր:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուռազին:

